

**Մեղրածոր համայնքի Մարմարիկ գյուղ
Բնակչություն՝ 746**

ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ՄԱՐՄԱՐԻԿ ԳՅՈՒՂԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Գյուղի ներկայիս անվանումը - Մարմարիկ

Գյուղի պատմական անվանումները - Փաշի գյուղ

Գյուղի հիմնադրման ժամանակաշրջանը -1915թ.

Որ համայնքներին է սահմանակից համայնքը - Մեղրածոր, Աղավնածոր

Գյուղի մակերեսը - 3144 հա

Հեռավորությունը մայրաքաղաքից - 58 կմ

Բնակչության թիվը - 746

Բնակչության կազմը - հայեր, եզդիներ

Օգտակար հանածոներ - չկա

Կրթական հաստատություններ - միջնակարգ դպրոց

Մշակութային հաստատություններ - չկա

Մարզական հաստատություններ - չկա

Արտադրական ձեռնարկություններ - չկա

Բնակչության հիմնական զբաղմունքը - անասնապահություն և գյուղատնտեսություն

Հոգևոր կառույցներ - Սուրբ Հովհաննես եկեղեցի

Պատմամշակութային հուշարձաններ - 1945թ.հայրենական պատերազմում զոհված զինվորների հիշատակին կառուցված հուշարձան, Արցախյան պատերազմում և

1915թ-ի ցեղասպանության նահատակների հիշատակին կառուցված հուշատախտակ

Գյուղի մասին գրքի առկայություն - չկա

ՊԱՏՄԱԿԱՆ ԱԿՆԱՐԿ

Մարմարիկ գյուղը գտնվում է Փամբակ և Ծաղկունյաց լեռնաշղթաների միջև, Մարմարիկ գետի հովտում, Հրազդանից 12 կմ հյուսիս-արևմուտք: Մարմարիկի սարերը հայտնի են իրենց սառնորակ աղբյուրներով, որը բավարարում է գյուղին 100 տոկոսով: Բնակչությունը զբաղվում է անասնապահությամբ, հացահատիկի, կարտոֆիլի, կաղամբի, մշակությամբ: Գյուղում պահպանվել է Սուրբ Հովհաննես եկեղեցին: Գյուղի ջրերով սնվում է նաև Մեղրածոր գյուղը: Կլիման ձմռանը ցրտաշունչ է, ամռանը՝ զով: